



ԱՌԱՋԱԿԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՏԵԱՆ ԹԵՍԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՐԵՒՏԵԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՌԱՋԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ

Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանի Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներու Խորհուրդը, յանձինս Յօյ Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի զոյգ առաջնորդներուն՝ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ Գերշ. S. Յովսան Արք. Տերտերեանի, Ղըպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. S. Սերաբիոն Եպիսկոպոսի եւ Կողի Ուղղափառ Եկեղեցւոյ, Երեքշաբթի, 25 Սեպտեմբեր 2007ին, իր հերթական ժողովը գումարեց Եջմիածնական Թեմի Առաջնորդարանին մէջ, Պըրապէնք: Երկրէն դուրս ճամբորդած ըլլալով, ժողովէն կը բացակայէր Կողի Եկեղեցւոյ Առաջնորդը՝ Գերշ. S. Եռուժին Զափլան Արքեպիսկոպոս:

Առաւոտեան ժամը 11:00ին, Առաջնորդ Սրբազան Յայրեր իրենց ընկերակցող Եկեղեցական հայրերու մասնակցութեամբ բացման աղօթքն ետք, անցան ժողովական աշխատանքներուն: Ժողովը ընսարկեց յառաջիկայ միատեղ ծրագիրներու եւ աշխատանքներու կարելիութիւնները: Ժողովը, լսելէ ետք Ուղղափառ Եկեղեցիներու կիրակնօրեայ վարժարաններու եւ Երիտասարդաց յանձնաժողովներու գեկոյցները, որոշեց.-

ա.- Եջմիածնական Թեմի Առաջնորդարանին մէջ Ծաբաթ, 8 Դեկտեմբեր 2007, առաւոտեան ժամը 9:00էն յետ-միջօրէ ժամը 2:30, 9-15 տարեկան աշակերտներու մասնակցութեամբ եւ Երգեցողութեամբ միջկիրակնօրեայ դպրոցներու Ս. Պատարագ եւ աշակերտական միօրեայ դաստիարակչական հաւաք:

բ.- Ուղղափառ Եկեղեցիներու Միջ-Երիտասարդաց յանձնախումբը, Նախորդ տարիներու նման, յառաջիկայ ամիսներու ընթացքին, դաստիարակչական ծրագրով միօրեայ օգտաշատ հաւաք մը կազմակերպէ:

գ.- Սունթեպելոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ Յինգշաբթի, 17 Յունուար 2008, առաւոտեան ժամը 10:00ին, Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներու համատեղ Ս. Պատարագ, հիւրընկալութեամբ Թեմին բարեշան Առաջնորդ Սրբազան Յօր եւ մասնակցութեամբ Եկեղեցականաց դասուն. Նոյն օրը կազմակերպել հոգեւոր լսարան, ապա տեղի ունենայ հաւաքական ճաշ, հիւրընկալութեամբ Առաջնորդ Սրբազան Յօր եւ Ս. Խաչ Մայր Տաճարի հոգաբարձութեան:

Հաւաքական ճաշով, յիշատակի հաւաքական նկարով եւ աղօթքով փակուեցաւ ժողովը:

Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներու հերթական յաջորդ ժողովի թուականն է Երեքշաբթի, 4 Դեկտեմբեր 2007, Ս. Վթանաս Ղըպտի

Ուղղափառ Եկեղեցւոյ մէջ, Նորթթիճ:

Յայտնենք, որ Ազգային Առաջնորդարանի Պրիստոնեական Դաստիարակութեան Գրասենեակը եւ Կիրակնօրեայ Վարժարաններու Վարիչ Յանձնախումբը, հովանաւորութեամբ եւ գլխաւորութեամբ թեմին Առաջնորդ Սրբազն Հօր, արդէն իսկ ծրագրումի նախնական աշխատանքներու ծեռնարկած են, գործնապես եւ լաւագոյնս մասնակցելու Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու կիրակնօրեայ Վարժարաններու թէ միջ-Երիտասարդական հաւաքներուն:

MEETING OF THE COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS

On the morning of Tuesday, September 25, the Council of Oriental Orthodox Bishops of the Western United States held their regular meeting at the Western Diocese in Burbank with the participation of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, H.G. Bishop Serapion of the Coptic Orthodox Church, members of the Syriac Orthodox Church representing H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan.

Following prayers by the Bishops and clergy members the meeting convened during which the possibility of future joint projects was discussed and the yearly program formulated. After hearing the reports of the Sunday Schools and youth group subcommittees the Council decided on the following:

- a. Divine Liturgy and educational gathering for students ages 9-15 of Oriental Orthodox Sunday Schools to be held at the Diocese on Saturday, December 8th.
- b. The organization of a one-day educational youth gathering in the near future.
- c. Divine Liturgy and spiritual gathering for Oriental Orthodox Bishops and clergy to be held on Thursday, January 17, 2008, at Holy Cross Cathedral in Montebello, hosted by H.E. Archbishop Moushegh Mardirossian and the Holy Cross Board of Trustees.

The meeting concluded with lunch and a group picture.

The next meeting is scheduled for Tuesday, December 4th, at St. Athanasius Coptic Orthodox Church in Northridge.